

ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ
ԺԶ-ԺԷ ԴԴ. ՀՆԱՏԻՊ ԳՐՔԵՐԻ ՏՊԱԳԻՐ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ՄԱՐԻՆԵ ՄԱՐԳՍՅԱՆ

ԺԶ-ԺԷ դդ. լեզուն բնութագրվում է որպես երբևէ նորմավորման չհասած միջին գրական հայերեն և նոր ձևավորվող աշխարհաբար¹: Այն հազեցած է գրաբարյան և բարբառային երևույթներով, լեզվական մի ամբողջություն, որտեղ, սակայն, վաղ աշխարհաբարի տարրեր քիչ են նկատվում:

Որքան էլ հիշատակարանների գրիչ-տպագրիչները փորձել են հարազատ մնալ գրաբարի ուղղագրությանը, այնուամենայնիվ ժամանակի խոսակցական լեզուն ներթափանցել է գրավոր խոսքի մեջ: Բառապատկերում շեղումներն առաջնահերթ արձանագրվել են հնչյունական համակարգում:

ԺԶ-ԺԷ դդ. համարվում են նաև բարբառների աշխուժացման շրջան, ուստի սպասելի էր նման երևույթների զգալի առկայություն: Մեր սպասումներն այս առումով չարդարացան:

Միջին հայերենի և վաղ աշխարհաբարի շրջանի տպագիր գրքերի հիշատակարաններում դրսևորվող տարբերակային հնչյունական երեվույթները հիմնականում կապված են շեշտի դիրքի փոփոխության հետ: Դրանց մի փոքր մասը բարբառային առանձնահատկություններ են, շատ ավելի քիչ՝ տպագրիչ-հիշատակագիրների սխալի կամ չիմացության հետևանք: Վերջինները, բնականաբար, դուրս են մնացել քննությունից:

Հայերեն հնատիպ գրքի հիշատակարաններում վկայված են հետևյալ հնչյունափոխական երևույթները:

1. Ձայնավորների փոփոխություններ

1) **Ա:** Այն գրաբարում գրեթե չհնչյունափոխվող, կայուն ձայնավոր էր: Հայերենի զարգացման հաջորդ փուլերում նկատելի են դառնում *ա-ի* փոփոխության տարբեր երևույթներ: Քննության ենթակա շրջանում հնատիպ գրքի հիշատակարաններում հանդիպած *ա-ի* հնչյունափոխության օրինակները արդյունք են մի դեպքում հոլովման՝ *Աստուծոյ՞*

¹ «Աշխարհաբար» տերմինն առաջին անգամ գործածել է ԺԵ դ. բժիշկ Ամիրդովաթ Ամասիացին՝ իր աշխատանքը ժամանակի խոսակցական լեզվով գրելու նպատակը բացատրելու համար. «... ես այլ ասենք, թե էր եղալ այս գիրքս *աշխարհաբար...*» (**Ա. Ամասիացի**, Անգիտաց անպետ, Վիեննա, 1927, էջ 25, տե՛ս **Է. Մկրտչյան**, Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձաններում, Եր., 1980, էջ 7): Այստեղ «աշխարհաբար» բառով Ամիրդովաթ Ամասիացին նկատի է ունեցել դասական գրաբարից շեղված խոսակցական լեզվով գրված լինելը, որը կապ չունի այժմյան ըմբռնման հետ:

² Այս բառի հնչյունափոխությունը գալիս է դեռևս գրաբարից, սակայն որպես բար-

(*< Աստուած. Հիշ. 13*), *շարակնոց* (*< շարական. Հիշ. 82*), մյուս դեպքում՝ բառաբարդման՝ *սրտհառաչ* (*< սրտահառաչ. Հիշ. 44*), *դժուարգիւտ* (*< դժուարագիւտ. Հիշ. 14*), *ամէնառատ* (*< ամէնառատ. Հիշ. 89*), որոնցում հոդակապի անկում կա:

Մեկական անգամ են վկայվել *ասել* բայի *ասցի*, *ասցէք* (*< ասացի, ասացէք. Հիշ. 19, 22*) ձևերը⁴: Սրանք կա մ արագախոսության արդյունք են և անցել են գրավոր լեզվին, կա մ էլ բարբառային երևույթ են:

Ա ձայնավորը սղվել է նաև հետևյալ բառերի բառամիջում՝ *հակառկէին* (*< հակառակէին. «...գոր պարտն էին դիմաբանեայ, հակառկէին մշտաբար բանիւք...».* Հիշ. 22), *քաղքին* (*< քաղաքին. Հիշ. 9*), *Եղիզար* (*< Եղիզար. Հիշ. 18*) և *արեղին* (*< արեղա < արեղայ. Հիշ. 7*), *Միրզենց* (*< Միրզանց < Միզայենց. Հիշ. 24*), *Ջողեցոյց* (*< Ջողաեցոյց < Ջողայեցոյց. Հիշ. 9*) բառերի վերջում: Հակառակ երևույթն է վկայված *Ամասդէլօտամ* (*< Ամասդէլօտ/դամ < Ամստերդամ. Հիշ. 26*), *Ասպահան* (*< Սպահան. Հիշ. 16*) բառերում: *Սպահան* հաստուկ անունը հանդիպում է նաև *Բսպահան* (*«Տպեցաւ տիպս երկու հարիւր, ի դրան Ս. Ամենափրկչի վանացս Նոր Ջողայու, ԴՍԱՍԿԱՆ քաղաքի».* Հիշ. 83) ձևով և հոլովման ժամանակ *ա-ի* անկմամբ հետևյալ միակ օրինակում՝ *Բսպահնու* (*«Արդ զմի Է. գրոցս եղև վերջ ի տպարանում Բսպահնու Ջողայ...».* Հիշ. 78):

Մահտեսի բառի *մդտեսի* (Հիշ. 4) ձևում *ա-ի* անկումը տեղի է ունեցել վերջին քայլում: Նախ՝ *հ > խ*, այնուհետև՝ *տ-ի* ազդեցությամբ *խ-ն* դ է հնչել, նոր միայն՝ *ա-ն* ընկել (*մահտեսի > մախտեսի > մադտեսի > մդտեսի*):

Մեկ օրինակով է վկայված բառաբարդման ժամանակ *ա* հոդակապի և *ի-ն*վ հանգավորվող բառի անհնչյունափոխ հետևյալ ձևը՝ *հոզիաշունչ* (*փիխ. հոզեշունչ. Հիշ. 24*):

Ա > է / ե հնչյունափոխությամբ են *աներակի* (*< աներեկի. Հիշ. 54*), *տարեկուսեալ* (*< տարակուսեալ. Հիշ. 22*), *կոկոեցին* (*< կոկոացին. «...ոչ կային վարպետք կատարեալք այսմ գործոյ և, մանաւանդ, ոմանք և՛ հա-*

բառային ազդեցության հետևանք, որը տեղի էր ունենում միայն թեք հոլովաձևերում, իսկ բառաբարդման և ածանցման ժամանակ մնում էր անփոփոխ (տե՛ս Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևաբանություն, Եր., 1958, էջ 11-12):

³ Հիշատակարանների համարները դրված են ըստ մեր պատրաստած նախօրինակ-բնագրի և ոչ թե «Հայ գրքում» դրանց զբաղեցրած համարների, քանի որ նախ՝ «Հայ գրքում» հիշատակարանների մեծ մասը համառոտ է բերված, և ապա՝ եղածներն էլ սխալաշատ են: Հիշատակարաններն այստեղ հնարավոր չէ առանձին հղել, ուստի հայցում ենք ընթերցողի ներողամտությունը՝ հետագայում դրանք հրատարակելու ակնկալիքով: Բնչպես նշվել է, հիշատակարանների մի մասը (կեսից քիչ) ստուգել ենք միջնորդավորված աղբյուրներից, այսինքն՝ ոչ հնատիպ գրքերից. նմանները մեր համարակալումից անմիջապես հետո նշել ենք աստղանիշով: Այն օրինակները, որոնք եղել են միայն * -ով հիշատակարաններում, բնականաբար մնացել են ըստ դրանց, իսկ որոնք եղել են նաև հնատիպերով ստուգված գրքերում, ապա ավելի հավաստի լինելու համար նշել ենք այդ աղբյուրները: Օրինակների մի մասը սահմանափակվում է տվյալ հիշատակարանով, ավելին՝ ունի եզակի գործածություն:

⁴ «Ասել» բայի մեկ այլ հետաքրքիր ձև է վկայված ԺԵ դ. հիշատակարաններում. տե՛ս Խ. Հարությունյան, XIV-XV դդ. հայերեն ձևագրերի հիշատակարանների լեզուն (ատենախոսություն), Եր., 2014, էջ 40-41:

կառակասերք, և՛ բարեատեացք կոկոնեցին զմեծամեծս»։ Հիշ. 22) բառերը:

2) **Ե, Է:** Հին հայերենի դասական շրջանում *ե* և *է* գրերը հնչյունական-արտասանական տարբեր որակ են ունեցել: Հետագայում սրանց արտասանությունը լեզվի խոսակցական տարբերակում նույնանում է, որը նաև գրավոր խոսքում է արտահայտվում: Այս ձայնավորների միմյանց փոխարեն գործածվելու հնագույն օրինակներ վկայված են դեռևս Ջ-Է դդ.-ում⁵:

ա) Բառակազմում և բառամիջում հաճախ է *ե-ի* փոխարեն *է* գրվում, կամ էլ զուգահեռաբար են գործածվում *էհեղ* (Հիշ. 89), *վայէլչութեամբ* (Հիշ. *վայէլչութեամբ*), *ժուժէցին* (Հիշ. 9), *վերին* (Հիշ. 9), *համբերաց* («... Որ և սիրտս **համբերաց** ըսկիսք արի տպագրին ...»։ Հիշ. 9), *հրամէաց* (Հիշ. 9), *եղէն* (Հիշ. 19), *կրէոց են* (Հիշ. 22), *տիրէլ* (Հիշ. 22), *կէնօք* (Հիշ. 9) և *երկրին / երկրի* (Հիշ. 9, 12), *երևանեցի / Երևանցի* (Հիշ. 22, 24), *Երուսաղէմ / Էրուսաղէմ* (Հիշ. 56, 26), *Տերզնցի / Տերզնցի* (Հիշ. 9, 7), *Աղէքսանդր / Ալէքսանդր* (Հիշ. 78, 76), *մէղապարտ / մէղապարտ* (Հիշ. 6, 1), *լէզու / լէզու* (Հիշ. 9, 20):

Երեց բառը վկայված է *երէց / էրէց / էրիցու / իրիցու / էրիցու* զուգաձևերով, որոնցում տեղի է ունեցել *ե > է > ի* հնչյունափոխությունը: *Ե > ի* հնչյունափոխություն է կատարվել նաև *հոիտորի* (< *հոետոր*. Հիշ. 79), *տիարն* (< *տեանն*) («...*ի* հայրապետութեան **տիարն** Եղեագարու...»։ Հիշ. 81), *ամինայգօրին* (< *ամենագօր*. Հիշ. 81) բառերում:

Ե > ը փոփոխությամբ են վկայված *Ամսթրդամ* (< *Ամստերդամ*. Հիշ. 22), *սրօբէագումար* (< *սերովբէ*. Հիշ. 25), *քրօբէախումբ* (< *քերովբէ*. Հիշ. 25), *ըղնզնաձն* (< *եղունզն*. Հիշ. 30) բառերը:

Ե-ն ա է դարձել *Վանատիկ* (< *Վենետիկ*. Հիշ. 2), *մահդասի* (< *մահտեսի*. Հիշ. 18), *երախայական* (< *զերեխայական*. Հիշ. 87), *աղբեր* (< *եղբայր*. «...*աղբերն Թօմասու...*»։ Հիշ. 89), *Մահամատն* (< *Մուհամեդ*. Հիշ. 22) բառերում:

Ե-ի հնչյունափոխության հաջորդ դրսևորումը սղումն է. ինչպես՝ *Վնէտիկ* (< *Վենետիկ*. Հիշ. 22), *մղտսի* (< *մղտեսի* < *մահտեսի*. Հիշ. 75):

Մի քանի բառերի բառասկզբում *ե-ն* երկհնչյունային արժեք է ստացել՝ *Յեւա* (< *Եվա*. «... *եւ զմայրն իմ՝ մղտեսի Յեւան ...*»։ Հիշ. 4), *Յետգար* (< *Էդգար*. *Է > ե > յե*. «... *զհայր նորին՝ զմահդասի յԵտգարն ...*»): *Ե-ի* նման դրսևորումը Հ. Մուրադյանը բացատրում է հետևյալ կերպ. «Բառակազմի դիրքում, ի.e երկբարբառի արտաբերության ընթացքում, նրանում առաջանում է *յ* կիսաձայնի որոշակի երանգ, որը այլ վայրերում սկսում է ավելի ընդգծվել, և *ie-ն* փոխարկվում է *ye* երկհնչյունի»⁶:

բ) *Է* ձայնավորը դեռևս գրաբարի դասական շրջանում ամենից

⁵ Տե՛ս **Ս. Ավագյան**, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, Եր., 1973, էջ 97 (Մրենի տաճարի արձանագրությունը):

⁶ **Հ. Մուրադյան**, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Հնչյունաբանություն, Եր., 1982, էջ 103:

անկայունն էր և հաճախ հնչյունափոխվողը: Հիշատակարաններում նման հնչյունափոխության մի մասը ժառանգություն է գրաբարից. երբեմն է-ի փոխարեն հանդիպում է *ե*, քիչ չեն նաև զուգաձևությունները՝ *առնէք / առնէք* (Հիշ. 7), *եր / էր* (Հիշ. 22), *չեր / չէր* (Հիշ. 2, 6), *Ետիկար* (< *Էդգար*. Հիշ. 19), *տպագրութենեն* (< *տպագրութենէն*. Հիշ. 19), *ծնընդենեն* (< *ծննդենէն*. Հիշ. 19):

Մի քանի բառեր արձանագրված են *է / ե*-ի հավելումով. այսպես՝ *Տերզէնցիս* (< *Տերզնցի*. Հիշ. 7), *Երևանէցի* (< *Երևանցի*. Հիշ. 24), *դէրամով* (< *դրամով*. Հիշ. 22), *սէղալ* (< *սխալ*. Հիշ. 22), *քէրիստոնէից* (< *քրիստոնէից*. Հիշ. 22), *հէմուտ* (< *հմուտ*. Հիշ. 22), *ապրիէլ* (< *ապրիլ*. Հիշ. 9): Նկատելի է նաև մի հետաքրքիր երևույթ՝ վերը նշված բառերի մի մասում էլ *է*-ի փոխարեն չգրվող *ը* ունենք՝ *Տերզ(ը)նցի* (Հիշ. 7), *դ(ը)րամով* (Հիշ. 22), *ս(ը)խալ* (Հիշ. 75), *ք(ը)րիստոնէից* (Հիշ. 10), *հ(ը)մուտ* (Հիշ. 27):

Աժանագին (< *էժանագին*. Հիշ. 98) բառում տեղի է ունեցել *է > ա* հնչյունափոխություն:

3) **Ի:** Հին հայերենին հատուկ էր *ի > ը* հնչյունափոխությունը: Միջին հայերենում այս օրինակափոխությունն առավել ընդգրկուն է դառնում. սրան զուգահեռ՝ հանդիպում են նաև *ի*-ի հնչյունափոխության այլ երևույթներ: *Ի*-ն է դարձել է *Ղըլէջեցն* (< *Ղիճեցն*. Հիշ. 22) բառում:

Ի-ն սղվել է հետևյալ բառերում՝ *փոքրկազոյն* (< *փոքրիկ*. Հիշ. 52), *լուսնացոյց* (< *լուսին*. Հիշ. 52), *Ղլճեցն* (< *Ղիճեցն*. Հիշ. 24), *Աւետսին* (< *Աւետիս*. Հիշ. 25), *Էջմիածնի* (< *Էջմիածին*. Հիշ. 26): Մի քանի բառերում *ի*-ն չի հնչյունափոխվել՝ *Սարգիսին* (Հիշ. 22), *միշտաքարոզ* (Հիշ. 79):

Ի-ի հավելումով են գրվել *Ետիկար* (< *Էդգար*. Հիշ. 19), *Ճիհանկիրենց* (< *Ջհանգիրենց*. Հիշ. 59) բառերը:

Բառավերջի բաց վանկի *ի*-ն բառաբարդման ժամանակ, հանդիպելով *ա* հոդակապին, վերածվում է *ե* հնչյունի. վերջինս երբեմն արտահայտվում է *է* գրով. պատճառը դրանց արժեքային նույնությունն է: Այսպես՝ *բարեմիտ* (Հիշ. 93), *բարեպաշտ* (Հիշ. 18), *բարե/եխօս* (Հիշ. 22, 37), *բարեպաշտութիւն* (Հիշ. 18), *բարեպաշտօն* (Հիշ. 52) (< *բարի+ա*), *հոգեգարմ* (Հիշ. 38), *հոգեկան* (Հիշ. 71), *հոգեկիր* (Հիշ. 79), *հոգեւուագ* (Հիշ. 16) (< *հոգի+ա*): Ի հակադրություն սրանց՝ *որդիեակ* (Հիշ. 7) բառում չի գործել *ի+ա=ե* կանոնը, ավելին, *ի*-ն և *ե*-ն հանդես են եկել կողք կողքի՝ «...Ջթելաղիրս զԽաչիկն գորդիեակս, յիշեցէք ի Տեր...»:

4) **Ու:** Ամենատարածված և դեռևս լեզվի զարգացման հին շրջանից եկող հնչյունափոխության տեսակ է *ու > ը* փոփոխությունը: Օր.՝ *մտի* (< *մուտ*. «...որոյ ընչիւքն մտի ես ի գործս յայս». Հիշ. 30), *սրբայգրեցի* (Հիշ. 22), *սրբանուէր* (Հիշ. 30), *սրբոհոյ* (< *սուրբ*. Հիշ. 15), *շրթունս* (< *շուրթ*. Հիշ. 21), *փոքրատփի* (< *փոքրատուփ*. Հիշ. 42): Պանտոխտութիւն (Հիշ. 22) բառում *ու*-ն պահպանվել է:

Լեզվի զարգացման հաջորդ փուլերին բնորոշ է նաև *ու > ո* անցումը՝ *սրբոհոյ* (< *սրբուհի*. Հիշ. 15), *գումարեցելոց* (< *գումար*. Հիշ. 79), *լումայասա-*

րաս (Հիշ. 98), լումայ (Հիշ. 24) (< լումայ): Ու-ն ա է դարձել Մահամասն (< Մուհամեդ. Հիշ. 22), րաբանապետ (< րաբունապետ. Հիշ. 24) բառերում:

5) Ո: Միջին հայերենի շրջանում տարածված էր *n*, *o* գրերի մեկը մյուսի փոխարեն հանդես գալը, նաև զուգահեռ գործածությունը, որ շարունակվում և ավելի ընդգրկուն է դառնում. *Յոլանդայ* (Հիշ. 24), *Յոլանդրա* (Հիշ. 22) (< *Հոլանդիա*), *Սաղոմոնի* (< *Սողոմոն*. Հիշ. 30), *Սօփիայն* (< *Սոֆիա*. Հիշ. 69), *Նիկոլայոս* (< *Նիկողայոս*. Հիշ. 69), *Գօհար / Գոհար* (Հիշ. 24, 42), *Ֆիլիսօֆա* (< *փիլիսոփա*. Հիշ. 86), *րօպէաբար* (< *րօպէաբար*. Հիշ. 92), *խօջա / խոճայ* (Հիշ. 97, 4) (< *խոջայ*), *պաշտոնատարս / պաշտօնատարս* (Հիշ. 52, 55) և այլն:

Ո > ա փոփոխություն է կատարվել *Մաղամօն* (< *Սաղոմոն* < *Սաղոմոն* < *Սողոմոն*. Հիշ. 52), *Յակաբայ* (< *Յակոբայ*. Հիշ. 25), *խահարար* (Հիշ. 16), *խահարարութեան* (Հիշ. 30) (< *խոհարար*), *խնդրուածաց* (< *խնդրուածոց*. Հիշ. 24) բառերում⁷:

Քիչ չեն նաև *n* > ու հնչյունափոխության դեպքերը՝ *Գուհար* (< *Գոհար*. Հիշ. 22), *կաթողիկոս* (< *կաթողիկոս*. Հիշ. 12), *Թոխարցի* (< *Թոխատեցի*. Հիշ. 7), *աւելորդ* (< *աւելորդ*. Հիշ. 69), *ծնուդ* (< *ծնող*. Հիշ. 22), *Նիկոլայոս* (< *Նիկողայոս*. Հիշ. 69), *պարգատումար* (< *պարգատումար*. Հիշ. 5):

6) Ը: Մա ամենաթույլ ձայնավորն է, որ հաճախ արտասանվում է, բայց չի գրվում: Որպես լիարժեք ձայնավոր դրսևորվում է բառակզում, այն էլ հիմնականում *ւ*, *ն*, *դ* ձայնորդներից առաջ⁸: Այն թույլ է հնչում բառակզում սուլական – շչական + պայթական կապակցություններից առաջ և ըստ ուղղագրական կանոնի՝ գրային դրսևորում չունի: Այնուամենայնիվ, կան նաև այդ դիքում ը-ի գրության փաստեր.

ա. բառակզում՝ *ըստուգաբանել* (Հիշ. 15), *ըՍտեփանոս* (Հիշ. 20), *ըստեկ* (Հիշ. 22), *ըթափեցեալ* (Հիշ. 89), *ըշտապմամբ* (Հիշ. 18), *ըզգեխեալըս* (Հիշ. 7), *ըզտեր* (Հիշ. 16), *ըզտեր* (Հիշ. 7), *ըզտպագրութեան* (Հիշ. 20), *ըզարբայգրելն* (Հիշ. 22), *ըզկնի* (Հիշ. 33): Շատ են ը-ի գրության դեպքերը *զ* նախդիրից առաջ, երբեմն նույնիսկ այն դեպքում, երբ նախդիրը դրված է ձայնավորից առաջ, և նրանից առաջ ը-ի արտասանությունը, առավել ևս գրությունը, շեղում է ընդհանուր նորմից. օր.՝ *ըզիս* (Հիշ. 9), *ըզաւագ* (Հիշ. 22).

բ. բառամիջում՝ *վերըստին* (Հիշ. 8), *վըստահութեանն* (Հիշ. 22), *Սարգըսի* (Հիշ. 91), *ըբսակ* (Հիշ. 16).

գ. բառավերջին ը-ն հետին դարերի երևույթ է, գրվել է ն հոդի փոխարեն: Սակայն կան ն հոդից առաջ ը-ի գրության մի շարք օրինակներ, որոնք փաստում են դրա՝ որպես որոշիչ հոդի դեռևս ոչ լիարժեք գի-

⁷ Վերջին՝ *խահարար* և *խնդրուածաց* (նաև *խնդրուածոց*) ձևերը կան ՆՀԲ-ում (տե՛ս հ. I, 1836, Վենետիկ, էջ 913, 953):

⁸ Ը-ի հնչման և հնարավոր գրության մասին է խոսում Հ. Աճառյանը իր «Քննություն կրկնագիր Ագաթանգեղոսի» («Հանդես ամսօրեայ», 1913, հիմ 1, էջ 1-19) հոդվածում այդ երևույթը վերագրելով Թ-Ծ դղ.-ին, մինչդեռ Ս. Ավագյանը դրա հիմքերը տեսնում է Զ-Է դղ. լեզվում (տե՛ս Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 115):

տակցվելը և ցույց են տալիս *ն* հոդից *ը*-ի առաջացման ընթացքը. օրինակ՝ *մեծըն* (Հիշ. 7), *թվականությունըն* (Հիշ. 20), *անունըն* (Հիշ. 22), *Մաֆրագըն* (Հիշ. 20), *Մաթեոսըն* (Հիշ. 22), *Տեառըն* (Հիշ. 4), *ազգացըն* (Հիշ. 75): *Ը*-ն գրվել է նաև *ս*, *ղ* հոդերից առաջ՝ *տոնացուցըս* (Հիշ. 7), *կազմարանըս* (Հիշ. 11), *մահըս* (Հիշ. 22), *կարըս* (Հիշ. 22), *պարտըս* (Հիշ. 22), *գիրըս* (Հիշ. 71), *տառըս* (Հիշ. 71), *գիրքըս* (Հիշ. 22), *Տէրըղ* (Հիշ. 92):

Ընդամենը մեկ օրինակում վկայվել է *ը > ե* փոփոխություն՝ *յենկերի* (< *ընկեր*. Հիշ. 22), որը բավականին արտասովոր է:

2. Երկբարբառներ և եռաբարբառներ

Մեր ուսումնասիրության առարկա աղբյուրներում նկատվում են նաև երկբարբառների և եռաբարբառների փոփոխություններ: Ի համեմատություն հայերենի հնչյունաբանության մեջ հաստատված ընդհանուր («գրական») կանոնների՝ միջին գրական հայերենի նորման այնքան էլ միասնական չէ, այնուամենայնիվ այդ պարագայում ևս հնատիպ հիշատակարաններում տեղ են գտնում ակնհայտ շեղումներ, այլ կարգի գրություն և այլն:

ա) Երկբարբառներ: Գրաբարյան երկբարբառները լեզվի զարգացման հետագա շրջանում ձգտել են պարզեցման: Սրանց մի մասն առավել զգայուն էր շեշտի նկատմամբ, մյուս մասը՝ ոչ այնքան:

Այ - Այս երկբարբառի հնչյունափոխության սակավաթիվ օրինակներ են վկայված: Հնատիպ գրքերի հիշատակարաններում նկատելի են՝

ա. *այ > ա* փոփոխություն՝ *եղբար*, *եղբարություն* (< *եղբայր*. Հիշ. 22, 16), *հորեղբար* (< *հորեղբայր*. Հիշ. 97), *յաժնուս* (< *յայժնուս*. Հիշ. 22), *զան* (< *զայն*. Հիշ. 9), *զաս* (< *զայս*. Հիշ. 3), *ամենան սուրբք* (< *ամենայն սուրբք*. Հիշ. 22), *հարենին* (< *հայրենին*. Հիշ. 9):

բ. *այ > է / ե*-ով են վկայված *աղբեր* (< *եղբայր*. «...աղբերն թօմասու...» Հիշ. 89), *կեր* (< *կայր*. «...որչափ, որ կարումս կեր...» (Հիշ. 22) *կամ* «...Ռ. մատչիլ չոր պարտք կեր քարխանին ...» Հիշ. 22) բառերը:

գ. Մի քանի օրինակում բառամիջի և բառավերջի *այ*-ը սղվել է՝ *Միքել* (< *Միքայել*. Հիշ. 5), *աբեղին* (< *աբեղայ*. Հիշ. 3), *ողորմի* (< *ողորմայի*. Հիշ. 36):

Աւ - Սա երկբարբառային արտասանություն ուներ միայն բաղաձայնից առաջ դիրքում: Ավանդական ուղղագրության պահպանման փորձը և *աւ*-ի *օ* (*n*) փոխվելը հանգեցնում են միևնույն բառի երկու, նույնիսկ երեք զուգահեռ գրության՝ *ծնօղ / ծնող / ծնաւղ* (Հիշ. 37, 18, 15), *բարեխօսութեամբ / բարեխաւսութեամբ* (Հիշ. 66, 3), *հաւր / հօր* (Հիշ. 3, 12), *աւրինակ / օրինակ / որինակ* (Հիշ. 15, 15, 17), *Ըստամբաւ / Մտամբաւ* (Հիշ. 4, 75), *աղաւթք / աղօթք / աղոթք* (Հիշ. 3, 7, 7):

Աւ > օ (*n*) հնչյունափոխությունն է գործում *հօր* (< *հաւր*. Հիշ. 12), *մօր* (< *մաւր*. Հիշ. 26), *եղբօր* (< *եղբաւր*. Հիշ. 49) բառերում: Սրանք արդյունք են գրաբարի անկանոն հոլովումների, որոնք ԺԶ-ԺԷ դդ. արդեն կանոնիկության ուղին էին բռնել:

Նկատելի են նաև *աւ* > *օ* հնչյունափոխության համաբանությամբ *աւ* > *օ* գրության անհարկի դեպքեր. այսպես՝ *օուր* (< *աւուր*. Հիշ. 9), *քաղաքօ* (< *քաղաքաւ*. Հիշ. 9), *շինեցօ* (< *շինեցաւ*. Հիշ. 2), *պատահեցօ* (< *պատահեցաւ*. Հիշ. 9): Ինչպես տեսնում ենք, այս փոփոխությունը դիրքային սահմանափակում չունի և հանդիպում է ոչ միայն բաղաձայնից, այլև ձայնավորից առաջ՝ ընդգրկելով բառի բոլոր դիրքերը:

Իւ / եւ - Սրանք դեռևս գրաբարում փոխարինաբար էին հանդես գալիս, ընդ որում՝ *եւ*-ով ձևն ավելի հին է համարվում: Է. Աղայանը *եւ*-ին լծորդակից է համարում ոչ միայն *իւ*-ը, այլև *եաւ* եռաբարբառը⁹: Դրա վառ օրինակ է *գիւղ* բառը, որն այստեղ վկայվել է գրության երեք ձևով՝ *գիւղաքաղաք* / *գեւղաքաղաք* / *գեօղաքաղաք* (< *գեաւղաքաղաք*. Հիշ. 14, 16, 76): Վերջին *գեօղաքաղաք* ձևն առաջացել է *գեաւղ* բարբառային տարբերակից *աւ* > *օ* հնչյունափոխությամբ:

Իւ / եւ երկբարբառի հնչյունափոխության երևույթներն այնքան էլ շատ չեն: Ընդամենը մի քանի բառում տեղի է ունեցել *իւ* > *ու* փոփոխություն՝ «*ուր* ձեռամբն» (< *իւր*. Հիշ. 22), *Գ/Կուլնագար* (< *Գիւլնագար*. Հիշ. 72, 59), *Լուտովիքոս* (< *Լիւղովիկոս*. Հիշ. 47), *դուրին* (< *դիւրին*. Հիշ. 22): Հիշատակարաններում *միւս* բառին զուգահեռ քանիցս կիրառվել են *միուս* (Հիշ. 22), *միուսանգամ* (Հիշ. 9) ձևերը՝ որպես *իւ*-ի *իու* երկհնչյունային արտասանություն: Մեկ դեպքում գործում է *իւ* > *ը* հնչյունափոխություն՝ *Ջրմբռնայ* (< *Ջմիւռնիա*. Հիշ. 22):

Իւ / եւ երկբարբառի փոփոխության երեք դեպք արձանագրվել է *իւ* (*եւ*) > *ե* անցումով՝ *աղբերէ* (< *աղբիւ/եւր*. «...գի մինչ ճաշակէք, ըմպելով ի համեղաբուղիս և քաղցրահոս **աղբերէ** տրին...» Հիշ. 89) *օրհնութեներն* (< *օրհնութիւններն*. «...որ զաւագ **օրհնութեներն** տասն-տասն շաբաղան արար...» Հիշ. 16) ***արենակից*** (< *արիւնակից*. Հիշ. 69):

Եա - Սա շեշտի կորստի հետևանքով վերածվում է *ե* ձայնավորի՝ *տերցո* (< *տեարց(ո)* < *տեարք* (*տեր*). Հիշ. 70), *առաքելոց* (< *առաքեալ*. Հիշ. 71), *տառապելոցս* (< *տառապեալ*. Հիշ. 53), *տպագրութենեն* (< *տպագրութեան*. Հիշ. 19), *զկենակից*, *կենօք* (*կեանք* < *կեանք*). Հիշ. 24, 44), *Ալամենց* (< *Ալամեանց*. Հիշ. 60), *Բղումենց* (< *Բղումեանց*. Հիշ. 24): Հազվադեպ *-ութին* ածանց ունեցող բառերի թեք հոլովաձևերի *եա* երկբարբառը հնչյունափոխվել է նաև շեշտակիր վանկում՝ «... *ներեցէք իմում պակասութենս և միայնութենս...*» (Հիշ. 19):

Շատ ավելի սակավ են *եա* > *ա* հնչյունափոխության օրինակները՝ *հայկազան* (< *հայկազեան*. Հիշ. 21), *մեռալ* (< *մեռեալ*. Հիշ. 22), *յիշա* (< *յիշեա*. Հիշ. 9), *համբերաց* (< *համբերեաց*. Հիշ. 9): Սրանք կա՛մ բարբառային երևույթներ են, կա՛մ տպագրական վրիպակներ. այդուհանդերձ մենք հակված ենք առաջին տարբերակին: *Հայկազոյ* (< *հայկազեան*. Հիշ. 71) բառում *եա* երկհնչյունի անկում կա:

⁹ Տե՛ս Է. Աղայան, Գրաբարի քերականություն, հ. I, գիրք Ա, Հնչյունաբանություն, Եր., 1964, էջ 106-108:

Ոյ - Սա ևս պարզ ձայնավորի է վերածվել: Սակայն հիշատակարաններում երկու բառի գրության մեջ *ոյ* երկբարբառի փոխարեն վկայված *ույ* երկհնչյունը արդեն ապացույց է նրա երկհնչյունային արտասանության՝ *նույնաթիւ* (< *նոյնաթիւ*. Հիշ. 53), *գրույս* (< *գրոյս*. Հիշ. 76): Ոյ երկբարբառը պարզեցման երկու ճանապարհով է ընթացել՝ *ոյ* > *ու* (*ոյ* > *ո*) և *ոյ* > *ի*. այստեղ առավել հաճախական է *ոյ* > *ու* հնչյունափոխությունը. օր.՝ *գունագուն* (< *գոյնագոյն*. Հիշ. 89), *քուր* (< *քոյր*. Հիշ. 22), *նորաբուս* (< *նորաբոյս*. Հիշ. 22), *վարձահատուց* (< *վարձահատոյց*. Հիշ. 16), *նունոյ* (< *նոյն*. Հիշ. 25), *շինելու* (< *շինելոյ*. Հիշ. 3), *տալու* (< *տալոյ*. Հիշ. 22): *Ոյ* > *ի* հնչյունափոխության վկայություններ չկան: Մեկ դեպքում *ոյ*-ի անկում է արձանագրվել *գրգկի* (< *գրքոյկ*. Հիշ. 62):

բ) Եռաբարբառներ: Սրանց հնչյունափոխությունը հիմնականում ժառանգություն է գրաբարից:

Եայ - Այս եռաբարբառի փոփոխությամբ վկայված բառերից հաճախադեպ են *եայ* > *է* անցումով քրիստոնեայ բառի *քրիստոնէից* (Հիշ. 65), *քրիստոնէականի* (Հիշ. 58) ձևերը և երկիցս էլ հանդիպել է *դուզնաքէի* (< *դոյզնաքէայ*. Հիշ. 61) ձևում: *Եայ* > *է* փոփոխությունը ոմանք բացատրում են *եայ* > *ես* > *է(է)⁰*, ոմանք էլ՝ *եայ* > *էյ* > *է¹* անցումով: Կարծում ենք, այս օրինակներում առաջին քայլում բառավերջի արդեն համը *յ* ձայնորդն է ընկել, ապա կատարվել է *ես* > *է* (բառավերջում՝ *է*) հնչյունափոխություն: Սրա վառ օրինակներ են *մերագնեաց* (Հիշ. 71) / *մերագնեայց* (Հիշ. 71), *Հայաստանեաց* (Հիշ. 79) / *Հայաստանեայց* (Հիշ. 95) բառերի զուգահեռ գործածությունը հիշատակարաններում: Եզակի օրինակ է հիշյալ եռաբարբառի անկումը *քերիստոնից* (< *քրիստոնէայ*. Հիշ. 22):

Իոյ - Այս եռաբարբառը գործում էր միայն *ի*-ով վերջացող բառերի սեռական-տրական հոլովաձևերում (*որդի* > *որդույ*, *հոգի* > *հոգույ*, *Կեսարացի* > *Կեսարացույ*, *տարի* > *տարույ*, *եկեղեցի* > *եկեղեցույ* և այլն). սրանց կողքին հաճախ հանդիպում են *ոյ*-ով, հազվադեպ՝ *ու*-ով և *ու*-ով ձևերը՝ *որդի* > *որդույ* / *որդոյ*, *որդո* (Հիշ. 27, 3, 9), *հոգի* > *հոգույ* / *հոգոյ* (Հիշ. 12, 15), *Կեսարացի* > *Կեսարացոյ* / *Կեսարացույ* / *Կեսարացու* (Հիշ. 14, 18, 39):

Եաւ - Հիշատակարաններում վկայված է *եաւ* > *եօ* հնչյունափոխությունը: Սա բացատրվում է շեշտի կորստի ժամանակ բաղաձայնից առաջ *աւ* երկբարբառի կրած փոփոխությամբ՝ *աւելեօք* (< *աւելեաւք*. Հիշ. 30), *ժանեօք* (< *ժանեաւք*. Հիշ. 44), *ընտանեօք* (< *ընտանեաւք*. Հիշ. 58), *սիրելեօք* (< *սիրելեաւք*. Հիշ. 71): Նույն տրամաբանությունն է գործում նաև *եօթն* (< *եաւթն*. Հիշ. 30), *գեօղաքաղաք* (< *գեաւղ*. Հիշ. 76) բառերում և դրանցով կազմված բարդություններում:

Իայ - եռաբարբառը իր միակ դրսևորումն ունի *միայն* բառում, որից ածանցված և բառաբարդված ձևերը հանդես են բերում անկայու-

¹⁰ Տե՛ս **Հ. Մուրադյան**, նշվ. աշխ., էջ 199, **Խ. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 50:

¹¹ Տե՛ս **Ա. Աբրահամյան**, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1964, էջ 15:

նություն. *իայ*-ը կա՛մ հնչյունափոխվում է *ե*-ի, կա՛մ մնում անփոփոխ՝ *մենաստան* (< *միայնաստան*. Հիշ. 16), *մենարան* (< *միայնարան*. Հիշ. 79) և *միայնութեան* (Հիշ. 18), *միայնութենս* (Հիշ. 19), *միայնաբար* (Հիշ. 26), *միայնոյ* (Հիշ. 93): *Իայ* > *է* հնչյունափոխություն է կատարվել *մէն* (Հիշ. 71) բառում «...*մէն միայն մնացեալ...*», որտեղ կա իմաստի սաստկություն: Մեկ այլ *իայ* > *ի* փոփոխությամբ է վկայված *մինակ* (< *միայնակ*. Հիշ. 15) բառը մեկանգամյա գործածությամբ:

3. Բաղաձայններ

Ի տարբերություն վերը քննվածների՝ բաղաձայնական համակարգում տեղի ունեցող երևույթները անօրինաչափ են և համակարգային բնույթ չեն կրում: Բաղաձայնական համակարգում վկայված հնչյունական փոփոխություններն ունեն հետևյալ պատկերը.

ա. Չայնեղների շնչեղ խլացում՝

*դ>թ*¹²՝ *յԱմիթ*¹² (Հիշ. 9), *Թաթեոս* (Հիշ. 71), *յիշողացթ* (Հիշ. 7), *ջչ*[՝] *միչնորդ* (Հիշ. 22), *աղչկունք* (Հիշ. 9), *գ>ք*[՝] *թաքայորութեանն* (Հիշ. 22), *փափաք* (Հիշ. 75), *փափաքմամբ* (Հիշ. 75), *Քասպար* (Հիշ. 89), *չոքա<չոգա* (Հիշ. 9), *թարքմանեցաւ* (Հիշ. 7), *թարքմանչի* (Հիշ. 17), *ցայք<ցայգ* (Հիշ. 22), *դուս գուքայ* (Հիշ. 22), *աւաք* (Հիշ. 79), *ձ>ց*[՝] *մերցայոր* (Հիշ. 22), *հանդերցեալ* (Հիշ. 22), *վարց* (Հիշ. 96):

բ. Շնչեղ խուլերի ձայնեղացում՝

չ>ջ[՝] *տենջալեացն* (Հիշ. 45), *ք>գ*[՝] *գրգոյս* (Հիշ. 66), *գիրգս* (Հիշ. 67), *գրգկի* (Հիշ. 62), *գրգուկս* (Հիշ. 88), *գրգկիկս* (Հիշ. 45), *Փամագրգկանս* (Հիշ. 73), *Չայնգաղ* (Հիշ. 96), *ց>ձ*[՝] *ընթերձողաց* (Հիշ. 17), *վաձառակ[ան]աձն* (Հիշ. 22), *թ>դ*[՝] *ընդերցողք* (Հիշ. 15):

գ. Չայնեղների խլացում՝

դ>տ[՝] *այտպէս* (Հիշ. 22), *այտ են* (Հիշ. 22), *Բաղտասար* (Հիշ. 14), *ազտարար* (Հիշ. 22), *Կոստանտինոս* (Հիշ. 19), *Ջիզմունտ* (Հիշ. 10), *Մուրատ* (*Մուրատխան*) (Հիշ. 10, 24), *Մահամատ* (< *Մուհամեդ*. Հիշ. 22), *պանտուխտութիւն* (Հիշ. 22), *Վանանտու* (Հիշ. 86), *յԵտգար* (Հիշ. 30), *բ>պ*[՝] *Ապաս* (Հիշ. 19), *Իպրահիմ* (Հիշ. 22), *Իպրահիմշա* (Հիշ. 4), *Ղարիպջան* (Հիշ. 54), *Պապաձան* (Հիշ. 61), *պարք* (< *բարք*. Հիշ. 93), *Լստամպօյցի* (Հիշ. 95), *Նասիպ* (Հիշ. 48), *Ամիրպէկ* (Հիշ. 59), *Խուտապաշխի* (Հիշ. 24), *Պալասան* (Հիշ. 22), *Պեկիխան* (Հիշ. 22), *ջ>ձ*[՝] *Ճիհանկիրենց* (< *Ջհանգիրենց*. Հիշ. 59), *Պապաձան* (Հիշ. 61), *Ճուդայեցի* (Հիշ. 66), *խոձայ* (Հիշ. 71), *Յակոբձան* (Հիշ. 12), *գ>կ*[՝] *Ետիկար* (< *Էդգար*. Հիշ. 19), *միւսանկամ* (Հիշ. 3), *Կուլնագար* (Հիշ. 59), *կալլիական* (Հիշ. 45), *հինկ* (Հիշ. 73), *հնկեկի* (Հիշ. 75), *հինկերորդում* (Հիշ. 46), *յանկելեալ* (Հիշ. 69), *Մանկասար* (Հիշ. 22), *Ճիհանկիրենց* (< *Ջհանգիրենց*. Հիշ. 59), *գ>ս*[՝] *ըսկիսբ* (Հիշ. 9), *ձ>ծ*[՝] *ինծ* (Հիշ. 15):

¹² Ամիդ տեղանունը «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում» վկայված է երեք տարբերակով՝ *Ամիդ* (հ. 1, էջ 216), *Համիդ* (հ. 3, էջ 326), *Յամիթ* (հ. 3, էջ 920):

դ. Խուլերի ձայնեղացում՝

տ>դ՝ *Մրարադու* (Հիշ. 30), *մահդասի* (< *մահսեսի*. Հիշ. 30), *Անդոն* (Հիշ. 80), *լադինացի* (Հիշ. 20), *ընդիր* (Հիշ. 3), **ճ>ջ՝** *վաղջան* (< *վախճան*. Հիշ. 25), *Ղըլէջեցն* (Հիշ. 22), **կ>զ՝** *ցանզ* (Հիշ. 30), *յառաջազա* (Հիշ. 90), *Մարգանտոն* (Հիշ. 7), *դու գուքայ* (Հիշ. 22), **ծ>ձ՝** *գորձ* (Հիշ. 22), *նորըն-ձա* (Հիշ. 22), **ս>զ՝** *Սուքիազ* (Հիշ. 97), *Ամբրոզիոս* (Հիշ. 93):

ե. Շնչեղ խուլերի խլացում՝

թ>տ՝ *թուխ/դտ* (Հիշ. 2, 9), *Սուլտանշայ* (Հիշ. 3), **ք>կ՝** *գիրկս* (Հիշ. 69), *գրկուկ* (Հիշ. 35), *Ադեկասնդր* (Հիշ. 86), **ց>ծ՝** *զգաձման* (Հիշ. 48):

զ. Խուլերի շնչեղ խլացում՝ **պ>փ՝** *փափին* (Հիշ. 7), **տ>թ՝** *լաթինացի* (Հիշ. 45), *նոթար* (Հիշ. 22), *Թոխաթ(ե)ցի* (Հիշ. 3), **կ>ք՝** *Լուտովիքոս* (Հիշ. 47):

Չայնորդ հնչյունների շարքում հանդիպող հնչյունական երևույթներն են՝

Մ > Ն, Ն > Մ - Սրանց հիմնական փոփոխությունը խոնարհման համակարգի հոգնակի առաջին դեմքում է կատարվել. Օր.՝ *տպեցինք* (Հիշ. 25), *կոչեցինք* (Հիշ. 24), *ձեռնարկեցինք* (Հիշ. 24), *աւարտեցինք* (Հիշ. 24), *յղեցինք* (Հիշ. 24), *հարինք* (Հիշ. 25): Դրանց միմյանց փոխարեն հանդես գալու հաջորդ դրսևորումը առնմանումն է պայթական շրթնային բաղաձայնի կողքին՝ *ազդմամբ* (< *ազդման*. Հիշ. 73), *գիտութեամբ* (< *գիտութեան*. Հիշ. 30), *կամակցութեամբ* (< *կամակցութեան*. Հիշ. 79), *ամբաժանելի* (< *անբաժանելի*. Հիշ. 81), իսկ *անբողջաբար* (< *ամբողջաբար*. Հիշ. 26) բառում տեղի է ունեցել տարնմանում:

Ը > Ռ - Հիշատակարաններում *ռ*-ի փոխարեն *ը*-ի գրությունը, որոշ դեպքերում էլ դրանց զուգահեռ գոյությունը խոսում են դրանց լիարժեքորեն չգիտակցվելու մասին՝ *փաքատրություն* (< *փառատրություն*. Հիշ. 71), *գաքնուկ* (< *գառնուկ*. Հիշ. 81), *արեանարու* (Հիշ. 95) / *արեանառու* (- Հիշ. 69), *Ուրհայեցի* (< *Ուռհայեցի*. Հիշ. 17), *ի դրան* (< *ի դռան*. Հիշ. 83), *դերաբոյս* (Հիշ. 4) / *դեռաբոյս* (Հիշ. 17), *սերիս* (Հիշ. 24) / *սեռիս* (Հիշ. 14): Ը-ն ընկել է **դուս գալ** (Հիշ. 22), **դուս գուքայ** (Հիշ. 22) հարադիր բայերում:

Յ - Այս ձայնորդը մի դեպքում դրսևորվում է հավելագրությամբ՝ *սրբայգրել* (Հիշ. 22), *յիշայտակարան* (Հիշ. 22), *տպայգրած* (Հիշ. 22), *բաբունայպետ* (Հիշ. 4), *արամագնեսոյց* (Հիշ. 47), *գրչսոյվ* (Հիշ. 2), *նոցայ* (Հիշ. 30), *սայ* (Հիշ. 16), *քահանայն* (Հիշ. 69), *Թոմայն* (Հիշ. 75), *փիլիսոփայն* (Հիշ. 16), *սպայ* (Հիշ. 53) և այլն:

Յ-ի անհարկի գրությունը արտահայտվում է նաև բառակազմում *յ*-ի նախդրային իմաստի մթազնմամբ՝ *ի յորն* («... **ի յորն** շարքաթ...» Հիշ. 7), *ի յերկաթին* («... **ձեռք և ոտք մեր ի յերկաթին**...» (Հիշ. 9), *ի յասելն* (Հիշ. 16), *ի յահարկու* («...**մուծանել զիս ի յերկիր, ուստի և իմ ի յահարկու** սրտաբեկութեանցս յայսցանեաց պակուցեալ սասանեցայ...» (Հիշ. 44)): Մեկ այլ պարագայում *յ*-ի անկում է նկատվում բառամիջում և բառավերջում՝ *ա, ո* ձայնավորներից հետո՝ *ողորմաի* (Հիշ. 9), *արքաութիւն* (Հիշ. 22), *վերա* (Հիշ. 15), *Մինասս* (Հիշ. 95), *խոճա* (Հիշ. 9), *դիմե-*

ցա (Հիշ. 15), հասա (Հիշ. 15), ԲՇ.անամեա (Հիշ. 15), Էփրաեցւոցն (Հիշ. 7), սկսա (Հիշ. 22), եռանձնեա (Հիշ. 20), Ջուղաեցի (Հիշ. 20), սկսա (Հիշ. 15), աշխատեցա (Հիշ. 96), միան (< միայն. Հիշ. 9): Կան նաև սրանց յ-ով գործածություններ:

Յ > հ հնչյունափոխության մեկ վկայություն կա. պատճառն արտասանական է՝ *հեբրայեցւոց* (< *յեբրայեցւոց*. «...գտառս **հեբրայեցւոցն**...». Հիշ. 24): Այստեղ գործել է նախ *ե*-ի երկհնչյունային արտասանություն [*յէ*], այնուհետև ձայնավորներից առաջ յ-ի *հ* արտասանության համաբանություն:

Հ-ի հնչյունափոխությունը վկայված է մի քանի բառերում՝ *հ*-ի անկմամբ (պատճառն արտասանական է. *հ* հազագ բաղաձայնի թույլ կամ գրեթե չհնչող արտասանությունը) և *հ* > յ փոփոխությամբ *Բպրահիւշա* (Հիշ. 4), *Սուլթանշա* (Հիշ. 7), *ոզի* (Հիշ. 44), *ոզեկանաց* (Հիշ. 26), *յոզի* (Հիշ. 15) / *հոզի* (Հիշ. 71), *Յօրէ* (Հիշ. 58) / *Հօրէ* (Հիշ. 86), *Սուլտանշայ* (Հիշ. 3), *յուս* (= *հոյս*. Հիշ. 22):

Տ և փ հնչյունների փոփոխություն կա ընդամենը երկու բառում կա՝ *Ֆիլիսօֆա* (< *փիլիսոփայ*. Հիշ. 86) և *Սօփիայն* (< *Սոֆիա*. Հիշ. 69):

Ոչ համակարգային հնչյունական երևույթներից են՝

հնչյունի հավելում՝ *հարցներն* (Հիշ. 6), *մասնկանց* (Հիշ. 58), *մանտրափթիթ* (Հիշ. 71), *ջնջնեա* (Հիշ. 24), *տեսեր* (Հիշ. 44), *դէրամ* (Հիշ. 22), *հէմուտ* (Հիշ. 22), *Ետիկար* (Հիշ. 19), *Ճիհանկիրենց* (Հիշ. 59), *ըշտամբմամբ* (Հիշ. 22), *քուսմէ* (Հիշ. 30), *բժիշապետն* (Հիշ. 17)։

հնչյունի (կամ հնչյունախմբի) անկում՝ *Անամելիք* (Հիշ. 19), *Մաթէոս* (Հիշ. 22), *Մաթոս* (Հիշ. 79), *աջողմամբ* (Հիշ. 25), *անաջողութիւն* (Հիշ. 69), *դժար* (Հիշ. 9), *ինսներորդի* (Հիշ. 16), *հարիւր նսուն եւ երեք* (Հիշ. 83), *օժարանան* (Հիշ. 16), *Բպրահիւշա* (Հիշ. 4), *Սուլթանշա* (Հիշ. 7), *ոզի* (Հիշ. 44), *ընդիմութիւն* (Հիշ. 79), *Եղիզար* (Հիշ. 18), *ուկն դնել* (< *ունկն դնել*. Հիշ. 9), *Յովանէս* (Հիշ. 9), *Տէրզցին* (Հիշ. 7), *շաղփաղփել* (Հիշ. 16):

Պարզ հնչյունների **բարդեցմամբ** է *սեփականօք* (< *սեպհական* < *սեպուհական*. Հիշ. 66) բառը, սրան զուգահեռ կա նաև *սեպհական* (Հիշ. 27) ձևը:

Թերի առնմանմամբ է վկայված *վատսներորդ* (< *վաթսուներորդ*. Հիշ. 30) բառը, որտեղ խուլ շփական *ս*-ն ազդելով պայթական շնչեղ խուլ *թ*-ի վրա այն վերածել է խուլ պայթական *տ*-ի:

Անբողջաբար (Հիշ. 26), *Ամբողջոս* (Հիշ. 93), *Սուքիագ* (Հիշ. 97) բառերում առկա է **տարնմանում**. առաջին դեպքում *բ*-ի ազդեցությամբ *ս*-ն վերածվել է *ն*-ի, երկրորդի ժամանակ վերջին *ս*-ն ազդելով իրենից առաջ գտնվող խուլ շփական *ս*-ի վրա այն դարձրել է ձայնեղ շփական *զ*, վերջին բառում առաջին *ս*-ի ազդեցությամբ է վերջին *ս*-ն դարձել է *զ*: **Տարնմանմամբ** են վկայված *աներակի* (Հիշ. 54), *Մաղամօն* (Հիշ. 37), *Մահամատ* (- Հիշ. 22), *խառնիխուռն* (Հիշ. 30), *երախայական* (Հիշ. 87) բառերը: Վերջինիս մեջ նկատելի են և՛ տարնմանման, և՛ առնմանման երևույթներ:

Ղըլէջեցն (Հիշ. 22), սօլվաթաւոր («... ի խնամակալութեան ժողովոյս մերոյ բարեպաշտ և իշխանաշուք խօճայ Սարքրազին և այլ աստուածասէր **սօլվաթաւորացն**...» Հիշ. 19), իչն (=ինչ, «... Աստուած **իչն** որ վաստակ տա..., ... մինչև ի մահրս կարէս **իչն** որ ելանէ...», երկուսն էլ նույն հիշատակարանում է գործածված. Հիշ. 22), ընթրեցող (Հիշ. 69) բառերում տեղի է ունեցել **դրափոխություն**:

Այսպիսով, ուսումնասիրվող ժամանաշրջանի հնատիպ գրքի հիշատակարաններում առկա հնչյունական երևույթները մի կողմից օրինաչափ են և ժառանգված գրաբարից, մյուս կողմից՝ վկայված են զգալի թվով շեղումներ, որոնք ծնունդ են տվյալ ժամանակի գրական և խոսակցական լեզվի, բարբառների, ինչպես նաև տպագրիչների գրագիտության պակասի, հազվադեպ՝ տպագրական վրիպակների: Ինչ վերաբերում է հնչյունական երևույթների տեղայնացմանը, ապա խիստ դժվար է, և լիարժեք արդյունք չենք կարող ստանալ:

Բանալի բառեր – հիշատակարան, տպագիր, հնատիպ, հնչյունափոխություն, գրաբար, վաղ աշխարհաբար

МАРИНЕ САРГСЯН – Фонетические явления в колофонах старопечатных книг XVI-XVII вв. – В статье рассмотрены фонетические явления, отражённые в колофонах старопечатных книг (XVI-XVII вв.). Среди них преобладают те, которые связаны с позиционным чередованием звуков. Наряду с явлениями, унаследованными от грабара, представлены и другие; с одной стороны, они закономерны, но с другой, отклоняются от принятых в то время норм, что объясняется не вполне развитым ещё литературным и разговорным языком, включая диалекты, а также недостаточной грамотностью печатников и, реже, опечатками. Что касается локализации фонетических явлений, то она чрезвычайно сложна.

Ключевые слова: колофон, печатный, старопечатный, фонетические изменения, грабар (древнеармянский язык), ранний ашхарабар (современный армянский язык)

MARINE SARGSYAN – Phonetic Phenomena in Colophons of Old Printed Books of the XVI-XVII Centuries. – This article discusses various changes in phonetic phenomena in printed colophons of old printed books of the 16th-17th centuries, in which phenomena associated with positional sound alternations predominate.

Along with some phonetic phenomena inherited from Grabar, other phenomena inherent in this period are presented, which are regular on the one hand and deviate from the accepted rule on the other.

The latter originates in the insufficient development of the literary and spoken language of that time, dialects, as well as in the insufficient literacy of printers, and less often in misprints. As for the localization of phonetic phenomena, it is extremely difficult, and we cannot get the full result.

Key Words: colophon, printed, old printed, phonetic changes, grabar (old Armenian language), early ashkharabar (modern Armenian language)

Ներկայացվել է՝ 03.09.2019

Գրախառվել է՝ 24.10.2019

Ընդունվել է տպագրության՝ 25.05.2020